

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ  
ՀՐԱՄԱՆ

---

«12» հոկտեմբերի 2017թ.

No 2930 – Ա

«ՇՆԶԱՌԱԿԱՆ ԱՆԲԱՎԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ ՄԻԱՎ ՎԱՐԱԿՈՎ ՊԱՑԻԵՆՏՆԵՐԻ  
ՎԱՐՄԱՆ», «ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՆՅԱՐԴԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՆԹԱԴՐՎՈՂ  
ԱԽՏԱՀԱՐՈՒՄՆԵՐՈՎ ՄԻԱՎ ՎԱՐԱԿՈՎ ՊԱՑԻԵՆՏՆԵՐԻ ՎԱՐՄԱՆ», «ՄԻԱՎ  
ՎԱՐԱԿՈՎ ՀՐԱՄԱՆ ԾՆՍԴԱԼՈՒԾՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ» ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության 1996 թվականի մարտի 4-ի №Օ-42 օրենքի 19-րդ հոդվածի «Ժ», 19.3-րդ հոդվածի 11-րդ կետերը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի № 1300-Ն որոշման Հավելված 1-ով հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 12-րդ կետի «Դ» ենթակետը,

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

Հաստատել.

1. «Շնչառական անբավարարությամբ ՄԻԱՎ վարակով պացիենտների վարման ընթացակարգը»՝ համաձայն հավելված 1-ի,
2. «Կենտրոնական նյարդային համակարգի ենթադրվող ախտահարումներով ՄԻԱՎ վարակով պացիենտների վարման ընթացակարգը»՝ համաձայն հավելված 2-ի,
3. «ՄԻԱՎ վարակով հղիների ծննդալուծման կազմակերպման ընթացակարգը»՝ համաձայն հավելված 3-ի:

Հ.ԱԼԹՈՒՆՅԱՆ

Հավելված 1

ՀՀ առողջապահության նախարարի

2017 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 2930 – Ա հրամանի

## ՇՆԶԱՌԱԿԱՆ ԱՆԲԱՎԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ ՄԻԱՎ ՎԱՐԱԿՈՎ ՊԱՑԻԵՆՏՆԵՐԻ ՎԱՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

Սույն ընթացակարգի նպատակն է բժշկական կազմակերպություններում արդյունավետ կազմակերպել բուժաշխատողների կողմից ՄԻԱՎ վարակով պացիենտների վարումը շնչառական անբավարության ժամանակ։ ՄԻԱՎ վարակով պացիենտների մոտ շնչառական անբավարության ժամանակ բժիշկը պետք է հետևի գործունեության ընթացակարգի ստորև ներկայացվող քայլերին։

### 1. Պացիենտի վիճակի գնահատում և հիվանդության պատմության

#### հավաքագրում


- 1) Գնահատել պացիենտի վիճակը։
- 2) Հավաքագրել հիվանդության հակիրճ պատմություն։
- 3) Ճշտել, երբ է սկսվել վիճակի ներկայիս վատթարացումը։
- 4) Կլինիկական ախտանշանների, հիվանդության պատմության հիման վրա տարբերակիչ ախտորոշում անցկացնել ՄԻԱՎ վարակով չպայմանավորված վիճակների և հիվանդությունների միջև։

### 2. Բուժօգնության իրականացում, առաջնահերթ կենսական կարևոր ֆունկցիաների ապահովում

### 3. Անհրաժեշտ հետազոտությունների իրականացում

Արտաքին շնչառության ֆունկցիայի որոշում։ Կրծքավանդակի ունտգենաբանական հետազոտություն։ Ինֆիլտրատիվ փոփոխությունների դեպքում հետագա քայլերն ըստ սխեմայի։

## ԱԼԳՈՐԻԹՄ



#### **4. Փաստաթղթավարություն**

- 1) Կատարել պատշաճ գրանցումներ պացիենտի վիճակի, առաջնային զննման, կատարված հետազոտությունների, տրամադրված բուժօգնության, նեղ մասնագետների խորհրդատվությունների վերաբերյալ:
- 2) Բարդ, իրարամերժ իրավիճակներում կազմակերպել ԶԻԱՀ-ի ԿՀԿ-ի մասնագետի լրացուցիչ խորհրդատվություն:

#### **5. Հապավումներ**

ՄԻԱՎ մարդու իմոնային անբավարարության վիրուս  
ԶԻԱՀ-ի ԿՀԿ ԶԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն  
ՕՀ օպորտունիստական հիվանդություն  
ՀՌՎ հակառետրովիրուսային  
ԼԴՀ լակտատդեհիդրոգենազա

#### **Գործունեության ընթացակարգի մշակման աշխատանքային խմբի անդամների անվանացուցակ**

1. Ս.Գրիգորյան՝ <<ԱՆ ԶԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի տնօրեն, բ.գ.դ., պրոֆեսոր, <<ԱՆ ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտի «ՄԻԱՎ վարակ» դասընթացի գիտական ղեկավար
2. Հ.Մանգոյան՝ «Վարդանանց» ՆԲԿ-ի տնօրեն, բ.գ.թ., Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի շարունակական բժշկական կրթության ֆակուլտետի անէսթեզիոնգիայի և ինտենսիվ թերապիայի ամբիոնի դոցենտ, «Էրեբունի» բժշկական կենտրոնի վերակենդանացման բաժանմունքի գիտական ղեկավար, կլինիկական ուղեցույցների և պացիենտի վարման գործելակարգերի ներդրման նպատակով առաջարկներ մշակող հանձնաժողովի նախագահ
3. Ա.Եղոյան՝ բժիշկ-թոքաբան, «Արթմեդ» բժշկական վերականգնողական կենտրոն, բ.գ.թ.

#### **Շահերի բախման հայտարարագիր և ֆինանսավորման աղբյուրներ**

Ընթացակարգը մշակվել է առանց որևէ ֆինանսական աջակցության: Աշխատանքային խմբի անդամները միմյանց կամ որևէ կազմակերպության հանդեպ շահերի բախում չունեն:

#### **Շնորհակալական խոսք**

1. Ա.Դավիթյան՝ բժիշկ-վարակաբան, ԶԻԱՀ ԿՀԿ
2. Ա.Պեպանյան՝ բժիշկ-վարակաբան, «Արմենիկում» կլինիկական կենտրոն
3. Ա.Աղեկյան՝ բժիշկ-վարակաբան, ԶԻԱՀ ԿՀԿ

## **Գրականության ցանկ՝**

1. Հակառետրովիրուսային դեղերի կիրառմամբ ՄԻԱՎ վարակի բուժման և կանխարգելման կլինիկական ուղեցույց, ՀՀ ԱՆ 07.08.17թ. N 2429-Ա հրաման:
2. Джон Бартлетт, Джоэл Галлант, Пол Фам. Клинические аспекты ВИЧ-инфекции. 2012.
3. Consolidated guidelines on the use of antiretroviral drugs for treating and preventing HIV infection: recommendations for a public health approach – 2nd ed. World Health Organization; 2016.
4. C.Hoffmann et J.K.Rockstroh HIV/2014/15 [www.hivbuch.de](http://www.hivbuch.de).

Հավելված 2

ՀՀ առողջապահության նախարարի

2017 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 2930 – Ա հրամանի

## ԿՆՀ-Ի ԵՆԹԱԴՐՎՈՂ ԱԽՏԱՀԱՐՈՒՄՆԵՐՈՎ ՄԻԱՎ ՎԱՐԱԿՈՎ ՊԱՑԻԵՆՏՆԵՐԻ ՎԱՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

Սույն ընթացակարգի նպատակն է բժշկական կազմակերպություններում արդյունավետ կազմակերպել բուժաշխատողների կողմից ՄԻԱՎ վարակով պացիենտների վարումը ԿՆՀ-ի ենթադրվող ախտահարումների ժամանակ: ՄԻԱՎ վարակով պացիենտների մոտ ԿՆՀ-ի ենթադրվող ախտահարումների ժամանակ բժիշկը պետք է հետևի գործունեության ընթացակարգի ստորև ներկայացվող քայլերին:

### 1. Պացիենտի վիճակի գնահատում և հիվանդության պատմության

#### հավաքագրում

- Գնահատել պացիենտի նյարդաբանական վիճակը:
- Հավաքագրել հիվանդության հակիրճ պատմություն:
- Ճշտել, երբ է սկսվել վիճակի ներկայիս վատթարացումը:
- Կլինիկական ախտանշանների, հիվանդության պատմության հիման վրա տարբերակիչ ախտորոշում անցկացնել ՄԻԱՎ վարակով չպայմանավորված վիճակների և հիվանդությունների միջև:


### 2. Բուժօգնության իրականացում, առաջնահերթ կենսական կարևոր ֆունկցիաների ապահովում

### 3. Գործիքային հետազոտությունների կատարում (գլխուղեղի ՀՏ, ՄՌՏ):

ՄԻԱՎ վարակով պայմանավորված ԿՆՀ-ի ախտահարումների ժամանակ ավելի ինֆորմատիվ է գլխուղեղի ՄՌՏ հետազոտությունը ներերակային կոնտրաստով, ՕՀ տարբերակիչ ախտորոշման անհրաժեշտության դեպքում կատարել սերոլոգիական քննություն: Այլ գործիքային հետազոտությունների կատարումը նյարդաբանի ցուցումներով ըստ անհրաժեշտության:

### 4. Հակացուցումների բացակայության դեպքում կատարել լումբալ պունկցիա: Հետագա քայլերն ըստ սխեմայի:

## ԱԼԳՈՐԻԹՄ



## **5. Փաստաթղթավարություն**

- 1) Կատարել պատշաճ գրանցումներ պացիենտի վիճակի, առաջնային զննման, կատարված հետազոտությունների, տրամադրված բուժօգնության, նեղ մասնագետների խորհրդատվությունների վերաբերյալ:
- 2) Բարդ, իրարամերժ իրավիճակներում կազմակերպել ԶԻԱՀ-ի ԿՀԿ-ի մասնագետի լրացուցիչ խորհրդատվություն:

## **6. Հապավումներ**

ՄԻԱՎ	մարդու իմունային անբավարության վիրուս
ԿՆՀ	կենտրոնական նյարդային համակարգ
ԶԻԱՀ-ի ԿՀԿ	ԶԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն
ՀՏ	համակարգչային տոմոգրաֆիա
ՄՌՏ	մագնիսառեզոնանսային տոմոգրաֆիա
ԷԼԳ	էլեկտրոէնցեֆալոգրաֆիա
ՊՇՈՒ	պոլիմերազային շղթայական ռեակցիա
ՕՀ	օպորտունիստական հիվանդություն
ՀՌՎ	հակառետրովիրուսային

## **Գործունեության ընթացակարգի մշակման աշխատանքային խմբի անդամների անվանացուցակ**

1. Ս.Գրիգորյան՝ «Ա ԶԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի տնօրեն, բ.գ.դ., պրոֆեսոր, «Ա ԶԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի տնօրեն, բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ Ազգային համալսարանի անվան առողջապահության ազգային ինստիտուտի «ՄԻԱՎ վարակ» դասընթացի գիտական դեկան»
2. «Մանգոյան՝ «Վարդանանց» ՆԲԿ-ի տնօրեն, բ.գ.թ., Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի շարունակական բժշկական կրթության ֆակուլտետի անէսթեզիոնգիայի և ինտենսիվ թերապիայի ամբիոնի ղոցենտ, «Էրեբունի» բժշկական կենտրոնի վերակենդանացման բաժանմունքի գիտական դեկան, կլինիկական ուղեցույցների և պացիենտի վարման գործելակարգերի ներդրման նպատակով առաջարկներ մշակող հանձնաժողովի նախագահ
3. Ա.Ղազարյան՝ թիվ 2 բուժմիավորման նյարդաբանական բաժանմունքի վարիչ, բ.գ.թ.:
4. Ա.Պեպանյան՝ «Արմենիկում» կլինիկական կենտրոն, բժիշկ-վարակաբան:

## **Շահերի բախման հայտարարագիր և ֆինանսավորման աղբյուրներ**

Ընթացակարգը մշակվել է առանց որևէ ֆինանսական աջակցության: Աշխատանքային խմբի անդամները միմյանց կամ որևէ կազմակերպության հանդեպ շահերի բախում չունեն:

### **Ընորհակալական խոսք**

1. Ա.Պապոյան՝ բժիշկ-համաճարակաբան, ԶԻԱՀ-ի ԿՀԿ-ի համաճարակաբանական հսկողության բաժնի վարիչ
2. Ժ.Պետրոսյան՝ բժիշկ-համաճարակաբան, ԶԻԱՀ-ի ԿՀԿ-ի կանխարգելման բաժնի վարիչ
3. Հ.Հովակիմյան՝ բժիշկ-վարակաբան, ԶԻԱՀ ԿՀԿ
4. Ե.Սիլկա՝ բժիշկ-վարակաբան, ԶԻԱՀ ԿՀԿ:

### **Գրականության ցանկ՝**

1. Հակառետրովիրուսային դեղերի կիրառմամբ ՄԻԱՎ վարակի բուժման և կանխարգելման կլինիկական ուղեցույց, ՀՀ ԱՆ 07.08.17թ. N 2429-Ա հրաման:
2. Джон Бартлетт, Джоэл Галлант, Пол Фам. Клинические аспекты ВИЧ-инфекции. 2012.
3. Consolidated guidelines on the use of antiretroviral drugs for treating and preventing HIV infection: recommendations for a public health approach – 2nd ed. World Health Organization; 2016.
4. C.Hoffmann et J.K.Rockstroh HIV/2014/15 [www.hivbuch.de](http://www.hivbuch.de).

Հավելված 3

ՀՀ առողջապահության նախարարի

2017 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 2930- Ա հրամանի

## ՄԻԱՎ ՎԱՐԱԿՈՎ ՀՂԻՆԵՐԻ ԾՆՆԴՈՒԾՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ


Սույն ընթացակարգի նպատակն է արդյունավետ դարձնել մանկաբարձրինեկոլոգների, ներնատուլոգների աշխատանքը ՄԻԱՎ վարակով հղիների ծննդալուծումը կազմակերպելիս, ինչի ընթացքում բժիշկը պետք է հետևի գործունեության ընթացակարգի ստորև ներկայացվող քայլերին:

### 1. **ՄԻԱՎ վարակով հղիի ընդհանուր և հղիության հետ կապված վիճակի գնահատում, անամնեզի հավաքագրում**

### 2. **ՄԻԱՎ վարակով հղիների ծննդաբերության վարում**

Ծննդաբերության վարման մարտավարությունը կախված է հղիության 36-րդ շաբաթում հղիի մոտ ՎԾ-ի մակարդակից, նրա ՀՌՎ բուժում ստանալուց և ներկայացված է ստորև բերված ալգորիթմում:

## ԱԼԳՈՐԻԹՄ\*



### **3. Փաստաթղթավարություն**

- 1) Կատարել պատշաճ գրանցումներ իդիի վիճակի, առաջնային գննման, կատարված հետազոտությունների, տրամադրված բուժօգնության, նեղ մասնագետների խորհրդատվությունների վերաբերյալ:
- 2) Բարդ, իրարամերժ իրավիճակներում կազմակերպել ԶԻԱՀ-ի ԿՀԿ-ի մասնագետի լրացուցիչ կոնսուլտացիա:

### **4. Հապավումներ**

ՄԻԱՎ	մարդու իմունային անբավարության վիրուս
ԶԻԱՀ-ի ԿՀԿ	ԶԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն
ՊՇՈ	պոլիմերազային շղթայական ռեակցիա
ՎԾ	վիրուսային ծանրաբեռնվածություն
ՀՌՎ	հակառետրովիրուսային

### **Գործունեության ընթացակարգի մշակման աշխատանքային**

#### **Խմբի անդամների անվանացուցակ**

1. Յու.Մանուկյան՝ մանկաբույժ, բժիշկ-վարակաբան, ԶԻԱՀ ԿՀԿ
2. Վ.Գրիգորյան՝ Վերարտադրողական առողջության, պերինատոլոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտի բուժական գծով փոխտնօրեն, Երևանի Մ. Հերացու անվ. Պետական բժշկական համալսարանի Մանկաբարձության և գինեկոլոգիայի թիվ 2 ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.
3. Ա.Զերջերյան՝ Վերարտադրողական առողջության, պերինատոլոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտի նորածնային ծառայության գծով փոխտնօրեն, Երևանի Մ. Հերացու անվ. պետական բժշկական համալսարանի Մանկաբարձության և գինեկոլոգիայի թիվ 2 ամբիոնի ասիստենտ:

### **Շահերի բախման հայտարարգիր և ֆինանսավորման աղբյուրներ**

Ընթացակարգը մշակվել է առանց որևէ ֆինանսական աջակցության: Աշխատանքային խմբի անդամները միմյանց կամ որևէ կազմակերպության հանդեպ շահերի բախում չունեն:

#### **Ընորհակալական խոսք**

1. Ռ.Աբրահամյան՝ Վերարտադրողական առողջության, պերինատոլոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ Ակադեմիկոս, բ.գ.դ., պրոֆեսոր, Երևանի Մ. Հերացու անվ. Պետական

բժշկական համաստանի Մանկաբարձության և գինեկոլոգիայի թիվ 2 ամբիոնի վարիչ, <<ԱՆ գլխավոր մանկաբարձ գինեկոլոգ

2. Ս.Գրիգորյան՝ <<ԱՆ ԶԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի տնօրեն, բ.գ.դ., պրոֆեսոր, <<ԱՆ ակադեմիկոս Ս.Վաղալթելյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտի «ՄԻԱՎ վարակ» դասընթացի գիտական դեկան

#### **Գրականության ցանկ՝**

1. <ակառետրովիրուսային դեղերի կիրառմամբ ՄԻԱՎ վարակի բուժման և կանխարգելման կլինիկական ուղեցույց, <<ԱՆ 07.08.17թ. N 2429-Ա հրաման:
2. Сводное руководство по использованию антиретровирусных препаратов для лечения и профилактики ВИЧ-инфекции. Рекомендации с позиции общественного здравоохранения, июнь 2013г., Всемирная Организация Здравоохранения, Обновленный перевод, апрель 2014г.
3. Профилактика передачи ВИЧ от матери ребенку. Оптимизация клинической тактики и эффективные методы ликвидации новых случаев ВИЧ-инфекции у детей. Клинический протокол для Европейского региона ВОЗ (обновленная версия 2012г.).
4. Consolidated guidelines on the use of antiretroviral drugs for treating and preventing HIV infection: recommendations for a public health approach – 2nd ed. World Health Organization; 2016.